ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 12.12.2025թ. ԿՆՔՎԱԾ N ԲՏԱՆ-ՄԱԾՁԲ-2025/29 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «15» մարտի 2026թ.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Դավիթ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Փլագ Ընդ Փլեյ Երևան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սերգեյ Սարուխանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.12.2025թ. թիվ 1910-Ն որոշումը և Կողմերի միջև 12.12.2025թ. կնքված N ԲՏԱՆ-ՄԱԾՁԲ-2025/29 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.5 և 9.13 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան, գինը և վճարման պայմանները

Կողմերը փոխադարձ համաձայնվեցին.

1.1 Հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի թիվ 1 հավելվածի:

1.2 Սահմանել, որ սույն համաձայնագրի գինը 2026 թվականի համար կազմում է 530,000,000 (հինգ հարյուր երեսուն միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039444 ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան (ստորագրություն)	«Փլագ Ընդ Փլեյ Երևան» ՍՊԸ Ք. Երևան, Արաբկիր, Քեռու փ.81/1, Հ/Հ 1570081210532100 ՀՎՀՀ 08311106 Տնօրեն՝ Սերգեյ Սարուխանյան (ստորագրություն)

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հաստատված է
N ԲՏԱՆ-ՄԱԾՁԲ-2025/29 գնման պայմանագրի
«15» 04 2026թ. կնքված
Թիվ 1 Համաձայնագրով

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	79951100/2	Միջոցառումների հետ կապված ծառայություններ	...	...	...	180,000,000	225,000,000	270,000,000	315,000,000	360,000,000	405,000,000	450,000,000	495,000,000	530,000,000	**530,000,000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039444 ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան (ստորագրություն)	«Փլագ Ընդ Փլեյ Երևան» ՍՊԸ Ք. Երևան, Արաբկիր, Քեռու փ.81/1, Հ/Հ 1570081210532100 ՀՎՀՀ 08311106 Տնօրեն՝ Սերգեյ Սարուխանյան (ստորագրություն)